



73. ՓԱՆՈՒԷԸ

Դանանդա Փալուլը թաքավոր ա ըլլմ: Տենըմ ա թաքավորութիւնը մեղկ բան ա, ինքը մի խելոք ու հալալ մարթ ա ըլլմ, ուզմ ա, որ թաքավորութենիցը դուս գա: Գնըմ ա ըրեխանց հետ տունիկ ա շինըմ, խազ ա անըմ, իրան շաշի տեղ ա դնըմ, բալի դուս անեն թաքավորութենիցը: Սա սհե Ոռնակա, Հախպատա պես մի գեղ ա ունենըմ, գալիս ա իրան տուն, որ ըշխատանքով ապրի: Դրան հմի էլ ասըմ են՝ Դիվանդա Փալուլ, մթամ թե՛ ինքն իրան ձեռով իրան դիվանն արավ:

Զըմովա օր ա ըլլմ, ամեն բանի հատած վախտը:

Դա վեր ա կենըմ, սհե դրա Հախպատ գնըմ: Տենըմ ա էն կռնուց մի իշավոր էկավ՝ մի խուրջին իշի վրա գծած, էկավ դրան հնգեր էլավ:

Դիվանդա Փալուլը հարցրուց, ասավ.— Տղա շան, իշիդ բռն ի՞նչ ա:

Ասավ.— Քիշմիշ ա:

Ասավ.— Մի բուռը քիշմիշ տուր՝ քեզ մի խրատ ասեմ:

Քիշմիշը տվուց, կերավ, ոնչ նա ասավ թե՛ խրատն ասա, ոնչ էլ ինքն ասավ խրատը:

Մի քիշ որ գնացին, ասավ.— Տղա շան, մի բուռը քիշմիշ էլ տուր, միեն էլ ասեմ (մթամ էն միւնը շատ էր ասել):

Հանեց մի բուռն էլ էրեւտ, էն էլ կերավ, էլ չի մի բան էլա ասին մինն էլա:

Էլ եդ գնացին, ասավ.— Տղա ջան. մինն էլ տուր ուտեմ, մինն էլ ասեմ, դու դբա Ոռնակ ես գնում, ես էլ դբա Հախպատ տիմ գնալ:

Էն մի բուռն էլ կերավ ու նա դենը գնաց, նա էլ դենը. ոնչ նա խրատն ասավ, ոնչ էլ նա ասավ, թե.— Բա խրատդ ո՞րն ա:

Էս իշավորը գնաց ու ճամփումը, մի ճկուտ տեղ, իշի ոտները ցեխումը թաղվեց: Հմի կարում չի էշը ցըխիցը հանե: Դես-դեն խլըշ-կոտաց, տեհավ հրե Դիվանդա Փալուլը գնում ա: Դի էրեւտ, ղի— եդ չի մտիկ արավ: էշը թողուց, վազեց եդնեն հասավ, ասավ.— Ա՛յ տղա, ղի եմ տալի ղի, խի՞ չես եդ մտիկ անում: էշը ցխումը թաղվել ա, արի գնանք քոմագ արա հանենք:

Թե,— ասավ,— այ տղա ո՞ւմ ես ղի տվել, դուն ասել ես՝ ա՛յ տղա, ա՛յ տղա, դե տղա շատ կա, ես ի՞նչ գիդեմ ո՞ւմ ես ձեն տվել: Իրար հետ գեինք, խի՞ չի հարցրիր՝ ով ես, ինչ մարթ ես, անըմըդ ինչ ա: Մխելի քիշմիշ տվիր ինձ, հու մուֆտա չի ուզեի. մի օր էլ կգաս մեր գեղը, կհարցնես՝ այսինչ մարթի տունը ո՞րն ա,— կասեն, կգաս, մի լավութին էլ ես կանեմ: էդ մի բուռը քիշմիշիդ խրատը: էն մի բուռը քիշմիշդ էլ որ կերա հա— նրա խրատն էլ էն ա, որ— մի տեղ մի զրից կիմանաս, մի տեղ մի բան կտենաս, մի տեղ մի սպանած մարթ կտենաս— գնաս ոչ ամեն բանն էլ կընգանդ ասես, կնիկը մուխաննաթ բան ա:

Եդնա քոմագ ա անում, իշին ցխիցը հանում են, ամենքն իրանց ճամփովը գնում:

Իշավորը որ գնում ա, ճամփումը տենում ա, որ մի հին, քանդված բաղնաստեղ. հրես մի վենձ ձմերուկ կախ էլած, թաղը վրեն: Դա էդ ձմերուկը ըտի թողում ա, գնում ա քիշմիշը ծախում, գեղամիշում մարթիք են թուփ էլած ըլում, ասում ա.— Տղեք, ո՞վ հետս մարջ կունի, տարու էս շախը թաղը վրեն ձմերուկ բերե:

Նրանք ծիծաղում են վրեն, հմա տենում են, որ սրա շիդակն ա: Սրա կնգանը մի սիրող ա ունենում, դրանց միշիցը ջգվում ա, գնում կնգա կուշտը, ասում ա.— Ախի, մարթդ սհե մի բանի վրտ մարջ ա գալի, էդ ո՞րդի ունի էդ ձմերուկը տարու էս շախին, որ ասում ա:

Թե ասում ա.— Մարթս ինձ բան չի ասել:

Ասում ա.— Որ գա տուն հա, հլա հարցրու, իմացի:

Մարթը տուն ա գնում, կնիկն ասում ա.— Այ մարթ, էդ ի՞նչ ես գեղամիշումը հայ-հայը գցել, թե տարու էս շախին դու թաղը վրեն ձմերուկ կարաս բերել, էդ ո՞րդի ունիս, որ մարջ ես գալի:

Ասըմ ա.— Այ կնիկ, հրե փլան բաղնրսատեղը տեհա, մարջ
եմ դալի, բալի մի քանի շահի տան, գնամ բերեմ:

Գալիս ա գեղամեջը թե չէ՝ էն տղեն վազ ա տալի դրա կնգա
կուշտը:— Ասա՞վ:

Թե՛ ասավ:

Թե՛ որդի՞ ա:

Թե՛ փլան բաղնրսատեղը:

Թե.— Դե ես կերթամ մարջ կունիմ հետը, կասեմ— թե բերի՞
կնիկդ իմն ա, թե բերի ոչ՝ ինչ ուզըմ ես՝ տամ:

Թե՛ դե, հա:

Գալիս ա մարջ դալի, ասըմ ա.— էդ խու ես էլ կբերեմ:

Թե՛ դե մարջ գանք:

Թե. ասավ.— Թե ես տարա, ինչ բանի վրա քու տանը ձեռա
վրեն դրի, թեգուզ կնիկդ էլ ըլի— իմն ա:

Նա էլ մարթ ա էլի, գլխի շի ըլըմ, թե շան գլուխը որդի ա
թաղված, ասըմ ա.— Լավ:

Մարջ են գալի, նախագահով-բանով հաստատըմ են, սա գնըմ
ա էդ ձմերուկը բերըմ:

էս մարթը միակն արավ, միակն արավ, էն Դիվանդա Փալուլը
միտն ընդավ:

Ասավ.— Տղեք, ինձ իրեք օր մլուլ տվեք:

Մի իրեք օր դրան մլուլ են տալի: Դա վի կացավ, գնաց Հախ-
պատ:

Ասավ.— Տղեք, Դիվանդա Փալուլի տունը ո՞րն ա:

Ասին.— էն ա:

Գնացին նրա տուն, վասմուհալն ասավ:

Դիվանդա Փալուլը դե մի խելոք, մեզ նման խեղճերի հմար
դարդ անող մարթ էր, ասավ.— Այ տղա, էտա կնիկդ տանըմ ա:
Կգնաս քու գլխատան կտերը աղուն կփոես, տան միջով գլխատան
ծակիցը նարդիվան կդնես, կնդանդ աղունի կշտին կնստացնես:

էկավ տհենց էլ արավ: Հմի նախագահով բանով գալ տին, որ
տենան էգ տղեն ինչ ա տանըմ մարջի տեղ:

Գալիս են, կնիկը կտերը աղունի կշտին նստած ա ըլըմ,
ասըմ են.— Դե ընչի վրա ձեռդ դնես, էն տիս տանիլ: Դա մի ոտը
դնըմ ա նարդիվանի վրա, մինն էլ փոխելիս՝ ձեռով բռնըմ ա, որ
վեր չընգնի:

Ասըմ են.— Օհո, դե ըտի կացի, ասել ես ինչ բան բռնեմ, էն
իմն ա,— նարդիվանը բռնեցիր, դե վեկալ տար:

Ըտի նոր նա էջ ա դառնում, նարդիվանը շալակն են տալի.
Վրգըմ: էդ ա ըլըմ ու էդ, նրա ոտն էդ տանից կտրըմ են: Տհենց ա,
ով նամարդութին ա անըմ, համ խալիսի կնգա հետ թաքուն շնու-
թին ա անըմ, պատիվը ոտկըմ, համ էլ ուզըմ ա կնիկը ձեռիցը
խլե, նրան պետք ա կտրատես, նամարդ կնդանն էլ հետը. որ գեշ
օրինակ չին ուրիշնուն:

